

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 16.09.2015թ. N324Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում (ԳՄՕԿ):

**-ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում (ԳՄՕԿ): Ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները, որքանով են դրանք առնչվում բաժանորդների իրավունքներին ու պարտականություններին, որոնց վերաբերյալ պետք է պատշաճ ձևով տեղեկացված լինեն:**

-Փոփոխությունների ու լրացումների համար հիմք են հանդիսացել գործնականում ծագած հարցերը, որոնց շուրջ կազմակերպվել են քննարկումներ Հանձնաժողովի ու «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ մասնագետների և շահագրգիռ կառույցների միջև: Քննարկումների արդյունքում հաշվի են առնվել մասնավորապես առևտրային հաշվառքի սարքի (հաշվիչի) աշխատանքի ճշտության ստուգմանը վերաբերող դիտողություններն ու առաջարկությունները, որոնք խմբագրված և լրամշակված ձևով ամրագրվել են ԳՄՕԿ-ի լրացումներում: Լրացումներ են կատարվել հատկապես ԳՄՕԿ-ի 4-րդ գլխում, որն առավելապես վերաբերում է առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ընթացակարգի ստուգմանը:

Համաձայն այդ լրացումների՝ բաժանորդին իրավունք է վերապահվում իր գազասպառման համակարգին ամրակցված առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրելու հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման իրավունք ունեցող այլ կազմակերպությունների:

Մինչ այդ ստուգաչափումը կատարվում էր միայն ՀՀ Չափագիտական մարմնի («Չափագիտական Ազգային ինստիտուտ» ՓԲԸ) կողմից, և ստուգաչափման ծախսերն էլ փոխհատուցում էր նախաձեռնող կողմը: Նշված լրացումը, որը իրավունք է տալիս բաժանորդին հաշվիչի ստուգաչափումը պատվիրել այլ՝ իր կողմից ընտրված փորձագիտական լաբորատորիայում, ստուգաչափման արդյունքների նկատմամբ բաժանորդների չհիմնավորված անհամաձայնությունները կանխելու ու ստուգաչափման գործընթացի հանդեպ վստահությունը բարձրացնելու նպատակ է հետապնդում:

**-Նշված լրացման պարագայում ինչպե՞ս են կարգավորվում մատակարար-բաժանորդ հարաբերությունները:**

-Մատակարարը պարտավոր է ապահովել բաժանորդի վերոնշյալ իրավունքը, որն իրականացվում է հետևյալ ընթացակարգով:

Մատակարարը բաժանորդի գրավոր դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում բաժանորդի ներկայությամբ ապահավաքակցում, փաթեթավորում և կնքված տեսքով բաժանորդին է հանձնում առևտրային հաշվառքի սարքը՝ այն ժամանակավորապես փոխարինելով այլ՝ առնվազն համարժեք, առևտրային հաշվառքի սարքով: Բաժանորդը ոչ ուշ, քան ապահավաքակցման հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին է վերադարձնում ստուգաչափված և Չափագիտական մարմնի կողմից վկայագրված, փաթեթավորված և կնքված առևտրային հաշվառքի սարքը և դրա փորձաքննության արդյունքների մասին իրավասու (հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման իրավունք ունեցող) կազմակերպության գրավոր եզրակացությունը, որը պետք է հաստատված լինի ՀՀ Չափագիտական մարմնի կողմից:

Ըստ այդմ՝ չի անտեսվել ՀՀ Չափագիտական մարմնի դերը: Տվյալ դեպքում այն հանդես է գալիս որպես իրավասու կազմակերպության կատարած փորձաքննության արդյունքները վերաքննող-վերահաստատող պետական մարմին:

**-Իրավունք ունի՞ մատակարարը մասնակցել իրականացվող ստուգաչափման աշխատանքներին:**

-Մատակարարն իրավունք ունի ներկա գտնվել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման, փորձաքննության և ստուգաչափման աշխատանքներին: Երբ մատակարարը ցանկություն է հայտնել մասնակցել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգմանը կամ ստուգաչափմանը, բաժանորդը պարտավոր է առնվազն 3 աշխատանքային օր առաջ մատակարարին գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել դրա իրականացման ժամկետների և վայրի մասին:

Այսինքն, պահպանվել է մատակարարի մասնակցության իրավունքը հաշվառքի սարքի ճշտության ստուգման կամ ստուգաչափման աշխատանքներին, ինչն անհրաժեշտ պայման է ստուգաչափման հետ կապված հարցերի նկատմամբ երկկողմանի իրավունքներն ապահովելու համար:

**-Սահմանվա՞ծ են ժամկետներ, թե բաժանորդը երբ կարող է վերադարձնել առևտրային հաշվառքի սարքը, ժամկետները խախտելու կամ չվերադարձնելու դեպքում ի՞նչ է նախատեսվում:**

-Այն դեպքում, երբ բաժանորդը 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին չի վերադարձնում առևտրային հաշվառքի սարքը, ապա մատակարարը իրավունք ունի բաժանորդից պահանջելու տույժ վերջին մեկ տարվա ընթացքում առավելագույն ծախս ունեցած ամսվա գազի արժեքի կրկնապատիկի չափով, իսկ այդ ժամանակահատվածում ծախս չուներնալու դեպքում՝ դրան նախորդող տարվա առավելագույն ծախս ունեցած ամսվա գազի արժեքի կրկնապատիկի չափով: Միևնույն ժամանակ, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջելու հասցված վնասի փոխհատուցում՝ ներառյալ առևտրային հաշվառքի սարքի արժեքի, վերջինիս ապահավաքման հետ կապված և այլ ծախսեր:

Սույնով նպատակ է դրվում բացառելու հաշվառքի սարքը միտումնավոր (մասնավորապես՝ հաշվառքի սարքի խախտումները թաքցնելու և խախտման արդյունքում վերահաշվարկվելիք գազի քանակի արժեքի վճարումից խուսափելու նպատակով) չվերադարձնելու դեպքերը, իսկ չվերադարձնելու դեպքում՝ ապահովելու «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատճառած նյութական վնասի փոխհատուցումը:

\*\*\*Հանձնաժողովի 16.09.2015թ. N324Ն որոշումն ամբողջությամբ զետեղված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքերում (gazpromarmenia.am և psrc.am):